# ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՔՍՊԱՆՍԻԱՆ ԻՐԱՆՈՒՄ

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐՏՅԱՆ

Կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանում Արևելքում իր գրված աշխարհագրական, քաղաքական և տնտեսական կարևոր դիրքի պատճառով եվրոպական գաղութարարների համար Իրանը բացառիկ հետաքրքրության առարկա էր։ Դտնվելով Հնդկաստան տանող ծովային և ցամաքային առևտրական ճանապարհների հանգուցակետում, Իրանը, բնականաբար, չէր կարող դուրս մնալ եվրոպական առևտրական կապիտալի տեսադաշտից, մանավանդ որ եվրոպական մանուֆակտուրաների համար նա հանդիսանում էր մետաքսի նման արժեքավոր հումքի աղբյուր։

Ավելին, նա իրենից ներկայացնում էր միջազգային առևտրի նշանակալից շուկա, որտեղ իրացվում էին Արևելքից, հատկապես Հնդկաստանից, Չինաստանից ու եվրոպական երկրներից՝ Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Փորթուգալիայից և Իսպանիայից ներմուծված ապրանքներ։ Այդ իսկ պատճառով եվրոպական առևտրական կապիտալը եռանդուն ջանքեր էր ծրագրում Պարսից ծոցը իր հսկողության տակ վերցնելու և ապա իրանական շուկա թափանցելու ուղղությամբ։

Արևմտաեվրոպական գաղութարարների այդ ջանքերը մեծ ակտիվության հասան հատկապես XVII դարի սկզբից, Սեֆյան Շահ-Աբաս I-ի գահակալության շրջանում, երբ մեկը մյուսի ետևից սկսեցին Իրան ժամանել արևմտաեվրոպական միապետների ու Հռոմի պապի ներկայացուցիչները, որոնք սկզբնապես աշխատում էին ձեռք բերել «քրիստոնեության քարոզության» և «ազատ առևտրի» իրավունքներ, դրանց միջոցով ձգտելով ապահովել իրենց տնտեսական և քաղաքական շահերն Իրանում և նախապայմաններ ստեղծել Սեֆյան կառավարությունից հետագայում ավելի էական տնտեսական և քաղաքական իրավունքներ ու արտոնություններ ստանալու համար։

Եվրոպական պետությունների հետ սերտ առևտրական և քաղաքական կապեր ստեղծելու շահերից մղված, Սեֆյան կառավարությունը սիրալիր կերպով ընդունում էր եվրոպական պետությունների ներկայացուցիչներին, նրանց լայն հնարավորություններ տալով հիմնավորվելու Իրանում։ Սեֆյան կառավարությունը արտաքին-քաղաքական նման ուղղություն ընտրելով, աշխատում էր ռազմական դաշինք կնքել եվրոպական պետությունների հետ ընդդեմ օսմանյան Թուրքիայի և նրանց օգնությամբ Իրանի արտաքին առևտրի ճանապարհը թեքել թուրքական տարանցիկ ուղիներից դեպի հարավ, Պարսից ծոցի ուղղությամբ։

XVI դ. վերջին և XVII դ. սկզբին Սեֆյան Իրանի տնտեսական կյանքում Պարսից ծոցի վրայով ծովային ճանապարհը կարևոր նշանակություն ստացավ, որովհետև այն մեծ առավելություններ ուներ Թուրքիայի ցամաքային քարավանային ճանապարհների համեմատությամբ, որտեղից ապրանքների արտահանումը կապված էր շատ ավելի բարձր ծախսերի հետ։ Թուրքական ճանապարհներն աչքի էին ընկնում իրենց անհարմարությամբ։ Թուրքիայում տիրող ներքին խռովությունները, սահմանային նահանգների կառավարիչների և մաքսային աստիճանավորների կամայականությունները, անվտանգության բացակայությունը քարավանային ճանապարհների վրա, անընդմեջ իրանա-թուրքական պատերազմները խոչընդոտ էին հանդիսանում Իրանի արտաքին առևտրի ընդլայնման համար։ Ավելին, թուրքական իշխանությունները հաճախ բռնագրավում էին իրանական վաճառականների ապրանքները և ճնշում գործ դնում նույնիսկ շահական վաճառականների նկատմամբ։ Այդ մասին բազմաթիվ փաստեր ենք գտնում Իսքենդեր Մունշիի մոտ։ Այսպես, «Վանի կառավարիչ Ահմեդ փաշան,— գրում է նա,— 1602 թ. գայ-

[1] L. L. Bellan. Chah Abbas, sa vie, son histoire, Paris, 1932, էջ 95։

թակղվելով խասե-ի շարիֆե վաճառականներից մեկի գույքով, սպանելով նրան, գրավեց նրա ամբողջ ունեցվածքը»[2]։

Իրանի արտաքին առևտրի ուղին հարավ տեղափոխելու միջոցով Շահ-Աբբաս ձգտում էր ոչ միայն ընդլայնել Իրանի արտաքին առևտուրը, այլև տնտեսական հարված հասցնել օսմանյան Թուրքիային, զրկելով նրան իրանական ապրանքներից գանձվող մաքսային հասույթներից։

Սակայն հիշյալ ծրագրի իրականացումը կապված էր մի շարք դժվարությունների հետ։ Ինչպես հայտնի է, դեռևս XVI դ. սկզբներին գրավելով Պարսից ծոցի առևտրա-տնտեսական հիմնական հանգույցները, փորթուգալացիները իրենց անրաժան տիրապետությունը հաստատեցին Պարսից ծոցի վրա, խոչընդոտներ հարուցելով եվրոպական պետությունների առևտրականների համար՝ ազատ առևտուր անելու իրանական նավահանգիստների հետ։ Իրանական ծովային առևտրի մենաշնորհը իրենց ձեռքը վերցնելու նպատակով նրանք նույնիսկ ծայրահեղորեն դժվարացրին պարսիկ վաճառականների գործունեությունը Պարսից ծոցի ավազանում, թույլ չտալով նրանց առանց փորթուգալացիների միջնորդության առևտուր անել ծոցի կղզիների և Հնդկաստանի հետ։ Դա խիստ սրեց իրանա-փորթուգալական հարաբերությունները։ Քանի որ 1580 թ. սկսած Փորթուգալիան և Իսպանիան միացած էին թագավորական ունիայով, ուստի, Շահ-Աբբաս I-ը գտնում էր, որ եվրոպական պետություններից միայն Իսպանիան է ի վիճակի Պարսից ծոցի միջոցով ազատ առևտուր կատարել Իրանի հետ և նպաստել Իրանի արտաքին առևտրի ուղին հարավ տեղափոխելու իր ծրագրերի իրականացմանը։ Այդ նպատակով Իսպանիայի հետ տնտեսական և քաղաքական համաձայնություն կնքելու համար դեռևս 1599 թ. Շահ-Աբբասը Իսպանիա էր ուղարկել մի դեսպանություն՝ անգլիացի Անտոնի Շիրլիի գլխավորությամբ[3]։ Սակայն բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին։ 1603 թ. սկսված իրանա-թուրքական նոր պատերազմը միաժամանակ կասեցրեց Շահ-Աբբասի ակտիվ գործունեությունն այդ ուղղությամբ։ Սակայն պատերազմը ավելի հրատապ դարձրեց այդ հարցի լուծումը, որովհետև Թուրքիայի հետ ռազմական բախումների հետևանքով իրանական վաճառականների քարավանային ապրանքափոխանակումը Թուրքիայի վրայով ծայրահեղորեն դժվարացավ։ Մյուս կողմից հարկ է նշել, որ իրանա-փորթուգալական լարված հարաբերությունների պատճառով (հատկապես 1601—1602 թթ. Շահ-Աբբաս I-ի կողմից փորթուգալացիներից Բահրենյան կղզիները գրավելուց հետո) իրանական վաճառականների ապրանքափոխանակությունը եվրոպական վաճառականների հետ Պարսից ծոցի նավահանգիստներում էլ ավելի էր դժվարացել։ Փորթուգալացիները հատկապես խոչընդոտներ էին հարուցում հայ վաճառականների առջև, արգելակելով սրանց առևտուրը եվրոպական վաճառականների հետ, կամ, լավագույն դեպքում, բարձր մաքսատուրքեր գանձելով նրանցից[4], մի բան, որ ստիպում էր հայ վաճառականներին զգալիորեն կրճատել իրենց ապրանքափոխանակությունը եվրոպական վաճառականների հետ Պարսից ծոցի նավահանգիստներում։ Փորթուգալացիների նման հալածանքները հայ վաճառականների, հատկապես ջուղայահայ վաճառականների նկատմամբ, որոնք շահի անմիջական գործակալներն էին իրանական մետաքսը արտահանելու գծով, անմիջականորեն ուղղված էին Սեֆյան կառավարության դեմ։ Նման հալածանքների միջոցով փորթուգալացիներն աշխատում էին դիպչել շահի առևտրական շահերին և ստիպել նրան զիջումներ անել Բահրենյան կղզիների հարցում, իսկ մյուս կողմից ձգտում էին հայ վաճառականներին ընդունել տալ կաթոլիկ դավանանքը և դրանով իսկ նրանց Իրանում իրենց առևտրական գործակալները դարձնելու։ Ավելին, հայ վաճառականությունը կարող էր օգնել ավգուստինյան միաբանության անդամներին՝ կաթոլիկ դավանանքը ամբողջ իրանահայության մեջ տարածելու գործում։ Սակայն փորթուգալացիների թշնամական գործողությունները հայ վաճառականների նկատմամբ էլ ավելի սրեցին իրանա-փորթուգալական հարաբերությունները[5]։

Վախենալով այդ իրադրության՝ Իսպանիայի շահերին դիպչող անցանկալի հետևանքներից, իսպանական դիվանագիտությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք նպատակ ունեին

---

[2] اسکندر بیك ترکمان (منشی)، تاریخ عالم آرای عباس. بسعی و اهتمام میرزا محمد خوانساری، تهران، ۱۳۱۳، ص ٤٤٠

[3] رشید یاسمی. تاریخ ایران، ۱۳۲۲، ص ۸٤

[4] R. Vadala, Le golfe Persique, Paris, 1920, էջ 14։

[5] Charle de Lannoy et Van der Linden, Histoire de l'expansion coloniale des peuples Europeens, t. II, Bruxelles, 1907. էջ 64։

կանխելու շահական կառավարության թշնամական գործողությունները փորթուգալացիների նկատմամբ։ 1607 թ. Իսպանիայի թագավոր Ֆիլիպ III-ի հրամանով Իրան ժամանեց ավգուստինյան միաբանության անդամ Անտոնիո դե Գուվեան՝ բանակցություններ վարելու Բահրենյան կղզիները փորթուգալացիներին վերադարձնելու և իսպանա-իրանական հակաթուրքական ռազմական դաշինք կնքելու համար[6]։

Անհրաժեշտ է նշել, որ XVII դ. առաջին երկու տասնամյակում իսպանա-իրանական բանակցությունները մեծապես կապված էին անգլո-իսպանական հակասությունների հետ։ 1600 թ. կազմակերպված անգլիական Արևելա-Հնդկական առևտրական ընկերությունը նոանդուն ջանքեր էր գործադրում դուրս մղելու փորթուգալացիներին Պարսից ծոցից և թափանցելու իրանական շուկա։ Այդ հողի վրա անգլո-իսպանական և անգլո-փորթուգալական հակասությունները և մրցակցությունը Հնդկաստան տանող օվկիանոսային առևտրական ճանապարհների վրա XVII դ. սկզբից ընդունում են առավել սուր բնույթ։ Իսպանական միապետությունը բոլոր միջոցներով աշխատում էր խոչընդոտել, որ անգլիացիները չթափանցեն Պարսից ծոց, իսկ փորթուգալացիները դուրս մղվեն Հնդկաստանի ու Եվրոպայի միջև իրենց զբաղեցրած առևտրական և ռազմական հենակետերից։ Իսպանական դիվանագիտությունը անընդհատ խոստումներ էր անում շահական կառավարությանը՝ առևտրական պայմանագիր կնքելու և իրանական հում մետաքսը Պարսից ծոցի վրայով արտահանելու վերաբերյալ[7]։

Իրանի արտաքին առևտրի ուղին Պարսից ծոց տեղափոխելու խնդիրը մեծապես առնչվում էր նաև Նոր-Ջուղայի առևտրական բուրժուազիայի շահերին։ Դա հնարավորություն կտար նրան ընդլայնել իր առևտուրը եվրոպական երկրների հետ և էլ ավելի լայն չափերով իրագործել իրանական հում մետաքսի արտահանությունը, որը կազմում էր նրա առևտրի հիմնական առարկան։ Վերոհիշյալ նկատառումներից ելնելով Նոր-Ջուղայի առևտրական կապիտալը մեծապես աջակցում էր իրանական կառավարությանը՝ առևտրական պայմանագիր կնքելու Իսպանիայի հետ։ Այսպես, օրինակ, Անտոնիո դե Գուվեայի դեսպանության մեջ, որը 1608 թ. Շահ-Աբաս 1-ի կողմից ուղարկվել էր Իսպանիա առևտրական պայմանագիր կնքելու և իրանական մետաքսը Պարսից ծոցի վրայով արտահանելու վերաբերյալ բանակցություններ վարելու նպատակով, ընդգրկված էր նաև շահի պալատին մոտ կանգնած Նոր-Ջուղայի մեծահարուստ խոջաներից մեկը՝ խոջա Սաֆարը։ Վերջինիս Շահ-Աբասը հանձնարարել էր վերոհիշյալ հարցերի շուրջը Անտոնիո դե Գուվեայից անկախ բանակցություններ վարել իսպանական արքունիքի հետ[8]։ Սակայն ինչպես այս, այնպես էլ իրանական հետագա դեսպանությունների բանակցությունները Իսպանիայում ոչ մի դրական արդյունք չտվեցին։ Իրանա-իսպանական բանակցությունները լրջորեն անհանգստացրին անգլիացիներին։ Իրանի և Իսպանիայի միջև առևտրական և քաղաքական պայմանագրերի կնքումը խափանելու նպատակով Անգլիան ակտիվորեն սկսեց միջամտել այդ բանակցություններին։ 1612 թ. անգլիական Արևելա-Հնդկական ընկերությունը մի դեսպանություն ուղարկեց շահի մոտ առևտրական պայմանագիր կնքելու բանակցություններ վարելու նպատակով[9]։ Դա լրջորեն անհանգստացրեց Իսպանիային և վերջինս 1614 թ. շտապ կարգով մի դեսպանություն ուղարկեց Իրան՝ Դոն Գարսիա դե Սիլվա Ֆիգվերոայի գլխավորությամբ, որը սպառնալից կերպով առաջարկեց շահին Բահրենյան կղզիները վերադարձնել փորթուգալացիներին և երաշխիք տալ, որ իրանական կառավարությունը թույլ չի տա անգլիացիներին առևտուր անելու Իրանի հետ[10]։ Շահը կոպիտ ձևով մերժեց իսպանական դեսպանի առաջարկը։ Իսպանիայի նկատմամբ դիրքի այսպիսի կտրուկ փոփոխության պատճառն այն էր, որ

---

[6] Gouvea, Antoine Fr. de, Relation de grandes guerres et victoires obtenus par le roi de Perse de Chah-Abbas, contre les empereurs de Turquie Mahomet et Achmet a son fils, Trad. de l'org. Portugais, Rouen, 1646, էջ 414—416։

[7] Նույն տեղում, էջ 467—468։

[8] Նեապոլի ազգային գրադարանում «Շահ-Աբաս I-ի դարաշրջանի նամակներն ու փաստաթղթերը» վերնագրով հավաքածուում պահվում են Իսպանիայում ու եվրոպական այլ երկրներում խոջա Սաֆարի բանակցությունների վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր։ Դրանց մի մասը պարսկերեն թարգմանությամբ հրապարակել է իրանական պատմաբան Ֆալսաֆի Նասրոլլան իր «Շահ-Աբաս I-ի կյանքը» չորս հատորանոց աշխատության մեջ։

[9] Е. С. Зевакин, Персидский вопрос в русско-европейских отношениях XVII в. («Исторические записки», 1940, № 8, էջ 133)։

[10] Don Garcia Figveroa, Ambassade en Perse, Paris, 1667, էջ 333։

Սեֆյան կառավարությունը այդ ժամանակ արդեն կողմնորոշվում էր դեպի անգլիացիները։ Համոզվելով, որ Իսպանիան մտադիր չէ առևտրական և ռազմական պայմանագիր կնքել Իրանի հետ, շահը սկսում է բանակցություններ վարել Արևելա-Հնդկական ընկերության հետ[11]։ Այսպիսով, Շահ-Աբաս I-ի կառավարության փորձերը՝ իսպանացիների օգնությամբ Իրանի արտաքին առևտրի ուղիները Թուրքական ճանապարհից դեպի Պարսից ծոց տեղափոխելու ուղղությամբ, ոչ մի արդյունք չտվեցին։ Մերձենալով անգլիացիներին, շահական կառավարությունը հույս ուներ նրանց միջոցով իրագործել իր հետամտած նպատակները և նրանց օգնությամբ էլ ամբողջապես դուրս մղել փորթուգալացիներին Պարսից ծոցից։ Շահ-Աբասի արտաքին քաղաքական դիրքավորումը փոխելու մեջ ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ Սուրաթի մոտ փորթուգալական ռազմա-ծովային նավատորմի ջախջախումը (1615) անգլիացիների կողմից։ Այս փաստը ակնառու կերպով ցույց տվեց, որ Փորթուգալիան այլևս ի վիճակի չէ պահպանել իր դիրքերը Արևելքում, և, ընդհակառակը, կապիտալիստական զարգացման ուղի անցած Անգլիան դառնում է հիմնական քաղաքական գործոն Արևելքի երկրներում։

1615 թ. շահը անգլիացիներին շնորհեց առաջին ֆերմանները Իրանում ազատ առևտուր անելու վերաբերյալ, իսկ 1617 թ. առևտրական պայմանագիր կնքեց անգլիական Արևելա-Հնդկական ընկերության ներկայացուցիչ Թոմաս Պարկերի հետ։ Պայմանագրի համաձայն իրանական ամբողջ հում մետաքսի գնման և արտահանման մենաշնորհը հանձնվում էր անգլիական Արևելա-Հնդկական ընկերությանը[12]։ Պայմանագրի կետերից մեկում շեշտվում էր, որ անգլիացիները պարտավորվում են մետաքսի արտահանումը իրագործել բացառապես ծովային ճանապարհով, Պարսից ծոցի վրայով[13]։ Անգլիացիները իրավունք էին ստանում Իրանի մետաքսաբեր շրջաններում իրենց առևտրական գործակալների միջոցով գնել հում մետաքս և տեղափոխել Պարսից ծոցի նավահանգիստները՝ ծովով արտահանելու համար։ Անգլիական առևտրական գործակալները Իրանի ամբողջ տերիտորիայում ազատորեն ապրանքներ տեղափոխելու իրավունք էին ստանում և լրիվ ազատվում էին մաքսային տուրքեր մուծելու պարտավորությունից[14]։ Այս արտոնությունները, բնականաբար, հնարավորություն էին տալիս անգլիացիներին ոչ միայն ազատ կերպով արտահանելու հում մետաքս և իրանական այլ ապրանքներ, այլև Իրան ներմուծելու անգլիական արդյունաբերական ապրանքներ։ Այդ պայմանագիրը անգլիացիների առաջին քայլն էր Իրան թափանցելու և Իրանի արտաքին առևտրի մենաշնորհը ամբողջապես իրենց ձեռքը վերցնելու ասպարեզում։

Կնքելով այս պայմանագիրը, Արևելա-Հնդկական ընկերության ձեռնարկատերերը նկատի ունեին, որ Իրանից հում մետաքսի անմիջական արտահանման դեպքում ընկերությունը մեծամեծ շահ կստանա, և, որ գլխավորն է, ամբողջությամբ իր ձեռքը կվերցնի այդ ապրանքի առևտուրը Արևելքի ու Եվրոպայի միջև և դուրս կմղի իր հիմնական առևտրական մրցակիցներին։

Ինչպես հայտնի է, մինչև Արևելա-Հնդկական ընկերության կողմից Իրանի հետ առևտրական կապեր հաստատելը անգլո-իրանական առևտուրը հիմնականում կատարվում էր անգլո-Թուրքական ընկերության միջոցով, որը հնարավորություն չունենալով առևտրական կապեր հաստատել անմիջականորեն Իրանի հետ, առևտրական գործառնություններ էր կատարում իրանահայ վաճառականների հետ Թուրքական քաղաքներում։ Հիշյալ ընկերությունը ստիպված էր մեծամեծ մաքսային և այլ տուրքեր վճարել օսմանյան կառավարությանը, որի հետևանքով նրա եկամուտները համեմատաբար ցածր էին[15]։ Բացի այդ, Թուրքական քաղաքներում հում մետաքսի գինը համեմատաբար ավելի բարձր էր, քան Իրանում։ Համաձայն անգլիական Արևելա-Հնդկական ընկերության գործակալ Ռիչարդ Ստիլի վկայության, 1618—20 թթ. հում մետաքսը Իրանում արժեր 50 տոկոսով էժան, քան Հալեպում[16]։

---

[11] رشید یاسمی، նույն տեղում، ص ۸۹

[12] مقتدم غلم حسین، کلید خلیج فارس، تهران، ۱۳۳۳، ص ۲۵

[13] نصرالله فلسفی، تاریخ روابت ایران و اروپا در دورهٔ صفویه، قسمت اول. تهران، ۱۹۳۷، ص ٦٤

[14] Նույն տեղում, էջ 65։

[15] А. А. Зонненштраль-Пискорский, Международные торговые договоры Персии, Москва, 1931, էջ 69։

[16] احمد تاج بخش، ایران در زمان صفویه، تبریز، ۱۹٦۱، ص ۱۹۷

Հետևաբար, վերոհիշյալ պայմանագիրը երաշխիք էր տալիս անգլիական Արևելա-Հնդկական ընկերությանը ոչ միայն մեծամեծ եկամուտներ ստանալու, այլև առավելություն ձեռք բերելու անգլո-թուրքական ընկերության, ինչպես նաև եվրոպական պետությունների առևտրական ուրիշ ընկերությունների նկատմամբ, որոնք իրանական հում մետաքս գնում էին գլխավորապես թուրքական քաղաքներում իրանահայ միջնորդ վաճառականներից։

Սակայն պայմանագիրը կնքելու հենց առաջին օրերից Սեֆյան կառավարության և Արևելա-Հնդկական ընկերության ներկայացուցիչների միջև ի հայտ եկան տարաձայնություններ։ Բանն այն էր, որ շահը պահանջում էր հում մետաքսի դիմաց բոլոր վճարումները կատարել ոսկով կամ արծաթով, մինչդեռ անգլիացիներն աշխատում էին վճարել իրենց ապրանքներով, այն է՝ արհեստականորեն բարձրացնելով դրանց գինը և, ընդհակառակը, իջեցնելով հում մետաքսինը[17]։ Մերժելով անգլիացիների առաջարկները՝ շահը հրամայեց դադարեցնել հում մետաքսի վաճառքը անգլիացիներին. Թոմաս Պարկերը և ընկերության մյուս ներկայացուցիչները ստիպված էին հեռանալ Իրանից։ Սակայն շուտով (1618 թ. սկզբներին) Արևելա-Հնդկական ընկերությունն ուղարկեց Իրան իր ներկայացուցիչ Ջիլլ Հոլլիսին՝ բանակցություններ վարելու և 1617 թ. պայմանագիրը հաստատելու համար[18]։ Բանակցությունների ժամանակ անգլիական ընկերության ներկայացուցիչը հայտարարում է, որ ընկերությունը համաձայն է Շահ-Աբասի բոլոր պայմաններին, միաժամանակ շեշտելով, թե ընկերությունը մեծապես շահագրգռված է, որ իրանական կառավարությունը լրիվ դադարեցնի հում մետաքսի վաճառքը իսպանացիներին ու փորթուգալացիներին և առհասարակ բոլոր նրանց, ովքեր զբաղվում են դրա առևտրով։ Դրանով անգլիացիներն աշխատում էին հարված հասցնել ոչ միայն իրենց եվրոպական մրցակիցներին, այլև հում մետաքսի առևտրով զբաղվող տեղական վաճառականներին։ Ինչպես հայտնի է, իրանական մետաքսի արտահանության զգալի մասը կենտրոնացված էր իրանահայ, հատկապես ջուղայեցի վաճառականների ձեռքում։ Վերջիններս կարող էին լուրջ մրցակիցներ դառնալ անգլիացիների համար ոչ միայն հում մետաքսը արտահանելու, այլև եվրոպական արդյունաբերական ապրանքները Իրան ներմուծելու գծով, մի հանգամանք, որ կարող էր խանգարել անգլիացիներին իրանական արտաքին առևտրի մենաշնորհը իրենց ձեռքում կենտրոնացնելու գործում։ Վերոհիշյալ պատճառներով անգլիացիներն աշխատում էին հարված հասցնել հայ առևտրական կապիտալին և լիովին մեկուսացնել նրան։ Բնական է, որ վերջինս, զգալով վերահաս վտանգի սպառնալիքը, պայքարի էր նետվելու իր շահերին սպառնացող օտարերկրյա կապիտալի դեմ։

Իրանական պատմաբաններ Ահմեդ Թաջ Բախշի և Նասրոլլա Ֆալսաֆիի տվյալների համաձայն ջուղայեցի հայ վաճառականները անմիջապես միջամտեցին Շահ-Աբաս I-ի կառավարության ու Արևելա-Հնդկական ընկերության բանակցություններին, որպեսզի արգելակեն առևտրական պայմանագրի կնքումն ու ի կատար ածումը։ Համաձայն Նասրոլլա Ֆալսաֆիի՝ ջուղայեցի վաճառականները շեշտակիորեն բարձրացրին կառավարությունից հում մետաքսի գնման գները, որպեսզի դրանով իսկ ստիպեն իրենց մրցակիցներին (իմա՝ անգլիացիներին) հրաժարվել պայմանագիրը կնքելուց և առհասարակ իրանական հում մետաքսի առևտրով զբաղվելուց[19]։

Ջուղայեցի խոշոր վաճառականները, օգտագործելով իրենց սերտ կապերը իրանական արքունիքի և անձամբ շահի հետ, դիմեցին նրան, խնդրելով չեղյալ համարել անգլիացիների հետ կնքված պայմանագիրը և մետաքսի արտահանման մենաշնորհը ամբողջապես տրամադրել իրենց[20]։

«Հայերի բուռն դիմադրության պատճառով,—գրում է Ահմեդ Թաջ Բախշը,—որոնք վճռականորեն հանդես եկան հում մետաքսի արտահանման մենաշնորհը անգլիացիներին տրամադրելու դեմ, ինչպես նաև ձգտելով ստանալ էլ ավելի մեծ հասույթներ հում մետաքսի վաճառանումից, Շահ-Աբասը վճռեց անուրդ հայտարարել պայմանով, որ հում մետաքսի տարեկան արտադրանքի համար շատ վճարողին տրամադրվի նրա արտահանման մենաշնորհը։ Անուրդի

---

[17] Հ. Քյուրդյան, Նյութեր հայ վաճառականության պատմության համար (հում մետաքսի առևտուրը և հայերը), առանձնատիպ, էջ 10—11։

[18] نصر الله فلسفی، تاریخ روابط...، ص ١٤٥

[19] Նույն տեղում, էջ 145—146։

[20] Նույն տեղում, էջ 68։

ժամանակ հայերը տվեցին ամենաբարձր գինը, յուրաքանչյուր հակին (36 բութման) 50 թուման ոսկով»[21]։ Այս նույն փաստը հաստատվում է նաև Պետրոս Դելլա Վալլեի տվյալներով[22]։

Շահն անմիջապես չեղյալ է հայտարարում անգլիացիների հետ կնքած պայմանագիրը և Իրանի ամբողջ հում մետաքսի գնման և վաճառահանման մենաշնորհը հանձնում է ջուղայեցի վաճառականներին[23]։

Պայմանագիրը չեղյալ հայտարարելուց հետո անգլիացիները բնականաբար ստիպված էին հեռանալ Իրանից։ Այսպիսով, իրանական շուկա, նրա էկոնոմիկայի մեջ թափանցելու անգլիացիների առաջին քայլերը վերջացան լիակատար ձախողմամբ։ Դրա հիմնական և գլխավոր պատճառը Իրանի հայ առևտրական կապիտալի գիմադրությունն էր, որն ամեն գնով աշխատում էր թույլ չտալ եվրոպական կապիտալի թափանցումը իր «սեփական» շուկան։ Առաջին հերթին պաշտպանելով իր առևտրական շահերը, հայ վաճառականությունը օբյեկտիվորեն հանդես էր գալիս օտարերկրյա կապիտալի, ինչպես նաև Իրանի նկատմամբ անգլիացիների գաղութակալական պլանների դեմ։

Իրանում արևմտաեվրոպական պետությունների կողմից կապիտուլյացիոն ռեժիմի սահմանման հարցերը ուսումնասիրող Մ. Փանահյանը իրավացիորեն նշում է, որ XVII դարում Իրանում «արևմտաեվրոպական գաղութարարների էքսպանսիայի դեմ պայքարի կազմակերպման գործում բացառիկ մեծ դեր են խաղացել Ջուղայի հայ վաճառականները, որոնք վճռականորեն հանդես էին գալիս Իրանում կապիտուլյացիոն ռեժիմի սահմանման դեմ, այդ պայքարում օգտվելով իրանական հասարակայնության ամենալայն խավերի աջակցությունից»[24]։

---

[21] էջ 68, նույն տեղում، احمد تاج بخش

[22] Pietro Della Valle, Reiss-Beschreibung in unterschiedlichen Theilen de-Welt, III, Genf, 1674, էջ 263։

[23] نصرالله فلسفی، زندگانی شاه عباس اول، جلد ۳، طهران، ۱۹۶۲، ص ۲۲۰

[24] ناحیان محمود فرزند غلم حسین، درباره رژیم کاپیتولاسیون در ایران، مسکو، ۱۹۶۲، ص ۱۱۲ ).(թեկնած. դիսերտ.